ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Համագործակցային ուսուցման դերը դպրոցում

ԿԱՏԱՐՈՂ՝ Էլիանորա Հովհաննիսյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

1. Համագործակցային ուսուցման տարրերը ---------- 5
2. Համագործակցային ուսուցման կազմակերպումը ---------- 11
3. Ինչպես սկսել համագործակցային ուսուցում ---------- 12
4. Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ ---------- 14
5. Համագործակցային ուսուցման մեթոդները ---------- 17

Եզրակացություն ---------- 20

Օգտագործված գրականություն ---------- 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվության ահռելի քանակության հոսքում, երբ դրա ծավալներն ավելանում անընդհատ մեծացող արագությամբ, ուսուցման գլխավոր նպատակն է դառնում սովորել սովորեցնելը: Եթե նախկինում՝ ուսուցման ընթացքում, շեշտը դրվում էր գիտելիքների յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևոր է գիտելիքի ընտրությունը, դրա մշակման, յուրացման և կիրառման գործնական հմտությունների ձեռքբերումը և կարողությունների զարգացումը: Դա իր հերթին ենթադրում է սովորողների արդյունավետ համագործակցություն և սովորելու գործընթացը ինքնուրույնաբար կազմակերպելու անհատի կարողությունների զարգացում:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման մեթոդների լիարժեք կիրառման դեպքում կարելի է հասնել այնպիսի նպատակների, ինչպիսիք են՝պետական մտածողություն ունեցող, փոխօգնության պատրաստ, հանդուրժող, օրենքներ և այլընտրանք հարգող,կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և որոշումներ կայացնող քաղաքացիներ կրթելը:

Համագործակցային ուսուցումը ուսումնառության գործընթացը կդարձնի առավել գրավիչ և հետաքրքիր՝ նպաստելով սովորողների համար հավասար մասնակցության հնարավորությունների ստեղծմանը: Սա թույլ կտա ուսուցչին լուծելու ավանդական մեթոդներով անլուծելի թվացող բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահեվման հարցը: Դասարանը կդառնա ընդհանուր նպատակ ունեցող անհատների փոքր խմբերի թիմ, որտեղ հեշտությամբ կարեկի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից:

Համագործակցային ուսուցման կիրառման դեպքում սովորողները համատեղ ջանքերով կարող են լուծել բարդ խնդիրներ: Դա ուուցչի առաջ կդնի նոր և ավելի բարձր խնդիրներով կապված ուսուցման նպատակների հետ.գիտելիքի մատուցմանն ու վերարտադրման ստուգմանը փոխարինելու են ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների նոր հմտությունների ուսուցման մոտեցումները:

Համագործակցային ուսուցումը՝ ուպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում լայն ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների կողմից: Դրա լայն ճանաչմնանը նպաստող գործոններից են՝

- Դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- Բազմակողմանի կրթական նպատակներին միժամանակ հասնելու հնարավորությունը
- Ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Համագործակցային ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել որոշակի տարրե, որոնց անվանում են համագործակցային ուսուցման տարրեր: Լավ և վատ կառուցված դասերը տարբերվում են հենց այդ տարրերի առկայությամբ կամ բացակայությամբ: Ավելին, հենց այդ տարրերն են, որ պետք է ապահովեն համագործակցային ուսուցումը դասի բոլոր փուլերում: Համագործակցային ուսուցման տարրերն ըստ Ջոնսոնների հիմնականում հինգն են

- Դրական փոխկապակվածություն
- Դեմ առ դեմ փոխազդեցություն
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն
- Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ
- Խմբային գործընթաց/մշակում
- Փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանք, որը ապահովում է համապատասխան պայմաններ, մյուս տարրերի կիրառման ու զարգացման համար:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ստեղծմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պարմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը: Համագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործման արդյունքում խմբերը կարող են հասնել համագործակցության բարձր մակարդակի:

Համագործակցային ուսուցման ապահովման կառնոր պայմաններից խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկապակվածության ապահովումը:Սովուաբար ուսուցման ընթացքում խմբի անդամների միջև փոխկապակվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով.

1. Մրցակցային՝ երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ: Նման մրցակցային իրավիճակներում, երբ կան հաղթողներ՝ լինում են նաև պարտվողներ: Արդյունքում մրցակցությունը կարող է խափանել խմբի

կայացման ընթացքը՝ խոչնդոտելով նպատակներին հասնելու համար համատեղ ջամքերի գոծադրմանը։

2.Անհատական՝ սոցիալական փոխկապակվածությունը կարող է վերանալ, որի արդյունքում խմբի անդամները առկախվում են իրենց խմբակիցների հաջողություններից կամ ձախողումներից։ Խմբային աշխատանքի ժամամակ նման բան տեղի է ունենում այն դեպքում, երբ յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրաքը, որը կապ չունի մնացածների հետ։

3. Համագործակցային խմի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար և գիտակցում, որ իրենք կարող են դրան հասնել միայն այն դեպքում, երբ խմբի բոլոր անդամները հասնեն իրենց նպատակներին։

Դրական փոխկապակվածությունը այն զգացումն է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հասնել հաջողության, քանի դեռ նրանք չեն հասել հաջողության և հակառակը.խմբի բոլոր անդամները գիտակցում և զգում են, որ իրենք ՛՛սուզվելու են կամ լողալու են միասին՛՛։

Դրական փոխկապակվածությունը ինքնաբերաբար չի առաջանում։ Ահա թե ինչու ուսուցչին անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել այն կանոնների և սկզբունքների վրա, որոնք խմբերում խթանում են դրական փոխկախվածությունը։

- Փոխկախվածություն ըստ խմբային նպատակների. համոզվելու համար, ու աշակերտներն իրոք հավատում են, որ իրենք ՛՛սուզվելու կամ լողալու են միասին՛՛և որ նրանց համար իրոք կարևոր է, թե ինչպես են սովորում իրենք և խմբի անդամները, ուսուցիչը պետք է խմբերի համար մշակի համատեղ ուսուցման նպատակներ։
- Դերային փոխկախվածություն. երբ պատասխանատվությունը բաշխվում է խմբի անդամների միջև։ Ուսուցիչը կարող է խմբի յուռաքանչյուր անդամին տալ համապատասխան դեր՝ ուժեղացնելով համախմբվածությունը խմբում։
- Ռեսուրսային փոխկախվածություն.առաջանում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է կիսել կամ բաշխել ունեցած միջոցները։

- Փոխկախվածություն ըստ հաջողության.երբ հաջողութբան դեպքում խումբը ստանում է մեկ մրցանակ։
- Փոխկախվածություն ըստ արդյունքի. առաջանում է այն ժամանակ, երբ յուրաքանչյուրը գիտի, որ կհասնի իր նպատակին միայն այն դեպքում, եւբ մյուսները նույնպես հասնեն իրենց նպատակներին։

Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. այս դեպքում խմբի անդամները ասխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքորով, որն ապահովում է խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը քննարկումներին։ Հաճախ այն անվանում են ՛;համագործակցային ՛՛ կամ ՛՛միասին սովորելու՛՛ դիրք։

Խթանող համագործակցության արդյունքում սովորողները՝

- Համագործակցում են ավելի արդյունավետ
- Փոխանակում են անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր
- Համատեղ մշակում և վերլուծում են ինֆորմացիան,
- Ապահովում են հետադարձ կապ՝ խմբի հետագա աշխատանքի բարելավման նպատակով,
- Քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. համագործակցային խմբերում անհատական հաշվետվությունը նշանակում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատվություն է կրում խմբի ուսուցման արդյունքների համար և վստահաբար գիտի, որ իր ներդրումը կարևոր է խմբի հաջողությունն ապահովելու համար։ Գիտակցումն այն բանի, որ՛՛ շղթան այնքանով է ուժեղ, որքանով ամուր են կապերը՛՛ օգնում է կենտրոնանալ այն անդամների ուղղությամբ, ովքեր ամենամեծ աջակցության կարիքն ունեն, և համոզվել, որ՛՛ այդ շղթայում թույլ կապեր չկան՛՛։

Անհատական հաշվետվությունը կամ պատասխանատվությունը նշանաում է, որ խմբի յուրաքանչյուր անդամ

- Պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու,

- Պատասխանատվություն է կրում ուսուցման արդյունքների համար,
- Խմբի մաս է
- Կարիք ունի գաղափարներով և մտքերով կիսվելու խմբի մյուս անդամների հետ,
- Կարող է լինել խմբի ներկայացուցիչը
- Պատրաստ է ներկաբացնելու խմբի աշխատանքի արդյունքը, և գիտի, որ գնահատվելու է խմբի յուրաքանչյուր անդամի առաջընթացն ու ներդրումը

Սոցիալական հմտություններ խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Այդ հմտությունները ներառում են վարքագծային այնպիի որակներ, ինչպիսիք են միջանձնային փոխհարաբերություններում վստահության ստեղծումը, ղեկավարման հմտությունները, հաղորդակցումը և միմյանց աջակցելը, որոշումներ կայացնելու և կոնֆլիկտներ լուծելու հմտությունները: Ուսուցիչները ընդունում են որոշումներ, ուսուցանում, շարունակաբար խրախուսում համագործակցային հատուկ վարքագծեր՝ ամրագրելով դրանք ակնկալիքներում, սահմանված դերերում և ապահովելով հետադարձ կապ:

Եթե սովորողներն առաջին անգամ են աշխատում խմբերով, ապա ուսուցչի համար գերխնդիր է դառնում նրանց սովորեցնել համագործակցելու հմտություններ:

Ստորև ներկաբացնում ենք սոցիալական հմտությունները ըստ համագործակցային ուսուցման մեջ հայտնի չորս մակարդակների

1. Խմորում
2. Ձևակերպում
3. Գործունեություն
4. Ձևավորում

Ձևավորման մակարդակի հմտությունները օգնում են ձևավորել խումբը և սահմանել վարքագծի համապատասխան նորմեր

- ապահովել աղմուկի նվազագույն մակարդակ
- մնալ խմբի հետ մինչև աշխատանքի ավարտը
- դիմել խմբի անդամներին անուններով

- հետևել խոսողին
- մասնակցել և ներդրում ունենալ աշխատանքը կատարելիս

Գործունեության մակարդակի հմտությունները կարևոր են խմբի աշխատանքները կազմակերպելու համար, ընդ որում խումբն իր առջև ունի երկու խնդիր՝ կատարել առաջադրանքը և անդամների միջև հաստատել արդյունավետ աշխատանքային փոխհարաբերություններ: Այս խնդիրները իրականացնելու համար աշակերտները պետք է կարողանան՝

- Լսել միմյանց
- փոխանակել մտքեր
- հարցեր տալ միմյաց
- ուղղորդել խմբային աշխատանքը և օգնել խմբին շարժվել առաջ
- քաջալերել և արժևորել յուրաքանչյուրի մասնակցությունը
- խնդրել օգնել կամ բացատրել
- առաջարկել աջակցություն
- վերապատմել
- նկարագրել միասին աշխատելու ընթացքում ունեցած զգացումները:

Ձևակերպման մակարդակի հմտություններն անհրաժեշտ են ուսուցանվող նըութը խորապես հասկանալու, կատարած գործողությունները հիմնավորելու, բարձրակարգ մտածողության ռազմավարություններ խթանելու, ինչպես նաև հանձնարարված նյութի կատարյալ տիրապետման համար: Այս հմտությունները զարգացնելու համար աշակերտները պետք է կարողանան՝

- Մտածածը բարձրաձայն ամփոփել
- ճշգրիտ լուծումներ որոնել՝ վերլուծելով խմբի անդամների պատմածները
- ձգտել կատարելագործման՝ կապելով սովորած նյութը ավելի վաղ սովորածի և ունեցած գիտելիքների հետ
- Օգնել խմբին վերհիշել
- Ստուգել հասկացածը՝ բարձրաձայն ձևակերպելով

Խմորման մակարդակի հմտություններն ուղղված են ուսումնասիրված նյութը վերահիմաստավորելուն, իրերի և երևույթների միջև եղած հակասությունները

ճանաչելի դարձնելուն, նոր տեղեկատվություն փնտրելուն, ակադեմիական բանավեճի մեջ մտնելուն: Այս խնդիրներն իրականացնելու համար աշակերտները պետք է կարողանան.

- Քննադատել գաղափարներն առանց քննադատելու մարդկանց
- Տարբերակել արտահայտած կարծիքները
- Հիմնավորել պատասխանը
- Խմբային գործընթաց/մշակում

Խմբային գործընթացը, որպես համագործակցային ուսուցման տարր, խմբի անդամների կողմից իրենց խմբի հաջողությունների և արդյունավետփոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է: Խմբային գործընթացը այն գործողությունների հաջորդականությունն է , որոնք կատարվում են կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ տպատակին հասնելու համար:

Թե մեծ, թե փոքր խմբերում խմբային գործընթացը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները

- Հետադարձ կապ
- Հաղթանանակի տոնում
- Խմբային
- գործընթաց
- Անդրադարձ
- Նպատակների բարելավում

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեններգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտների միջոցով։

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը։ Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը։

Ընդունված է հմտությունների այսպիսի դասակարգում՝

Մտածողության և տեղեկատվության դասակարգում

1. Մշակման հմտություններ
    - ամփոփում
    - կառուցում
    - կապակցում
    - համեմատում և կարևորում
    - տվյալների հավաքում
    - մեկնաբանում
    - քննադատում
    - վարկածների առաջադրում
    - գիտելիքների կիրառում
    - ստեղծում, նորարարություն
    - գաղափարների քարտեզագրում

2. Ակադեմիական հմտություններ
    - առարկայական գիտելիքների կիրառման հմտություններ
3. Ինքնաճանաչման հմտություններ

- Ինքնաճանաչում
- Սեփական վարքագծի քննարկում
- Արժևորում
- Ընտրություն և պլանավորում
- Ինքնագնահատում
- Նպատակադրում
- Զգացմունքների արտահայտում
- Լայնախոհ ընկալում
- Ունկնդրում
- Մտքերի փոխանակում և ուսուցում

Սոցիալական հմտություններ

- Միմյանց աջակցում
- Համատեղ պլանավորում
- Քաջալերում
- Խոսքի հստակ ձևակերպում
- Ընդհանուր նպատակների ձևակերպում

Քննարկման մեջ մյուսների ներգրավում

3. ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Համագործակցային ուսուցման առանցքը համագործակցային հմտություններն են, որոնց ուսուցումից էլ պետք է սկսել կիրառումը: Ահա այն քայլերը, որ կարելի է անել դասարանում առաջին շաբաթների ընթացքում.

Քայլ - աշակերտներին ցուցադրել համագործակցային աշխատանքի կարևորությունը:

Քայլ- սովորեցնել և խմբի հետ համատեղ ստեղծել դասարանային նոր կանոններ:

Քայլ- սովորեցնել և զարգացնել հիմնական հմտությունները:

Քայլ – սկսել դերային քարտերով և խմբի զարգացումը խթանող այլ վարժություններով:

Քայլ – կատարել ակադեմիական բովանդակության շրջանակներից դուրս գտնվող վարժություններ:

Քայլ- ստեղծել իրավիճակներ, որոնցում աշակերտները կկիրառեն հմտությունները։

Քայլ – հնարավորություն տալ աշակերտներին անդրադառնալու իրենց կիրառած հմտություններին և օգնել նրանց քննարկելու, թե ինչպես հմտություններն ավելի արդյունավետ դարձնել հետագայում։

Քայլ – կիրառել պարզ վարժություններ և կատարել խմբային գործընթացի բարելավում։

Քայլ – Հնարավորություն տալ աշակերտներին փորձարկելու համագործակցային ուսուցման հմտություններն այնքան ժամանակ, մինչև դրանք դառնան ինքնաբերաբար կիրառվող։

4. ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող ակտիվ և բարդ գործընթաց է: Ուսուցիչը այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռնել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն և այդ դերը լի է մարտահրավերներով: Այն նման է առաջնորդիդերի, որն ուղղորդում է դասարանը և ստեղծում փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը նպաստող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Թվում է, թե համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչը ավելի քիչ է աշխատում, քան ավանդական մեթոդներով աշխատող ուսուցիչը, քանի որ ուսուցման ժամանակի նշանակալի մասը նվիրվում է աշակերտների սովորելուն իրենց ընկերներից: Սակայն դա իրականում ճիշտ չէ. համագործակցային ուսուցումն օգտագործող ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ, որոնց մեջ մտնում են.

- դասերի, վարժությունների պլանավորում և զարգացում,
- սովորողների ծմբերի կազմում,
- Սովորողների տեղաբաշխում,
- սովորողներին առաջադրանքի ներկայացում և բացատրում,
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն,
- սովորողներին օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում,
- գնահատում

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբեչին անհրաժեշտ է զգալի ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ուսուցիչը պետք է բոլոր խմբերի աշխատանքի տևողությունը կանոնակարգի հետևյալ հրահանգով.՝՝Խնդրում եմ ավարտեք խմբային աշխատանքը երեք րոպեի ընթացքում՝՝: Որոշ խմբեր կջանան մյուսներից ավելի արագ ավարտել և արժանանալ ուսուցչի գովեստին:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը: Ժամանակի բաշխումը հատկապես կարևոր է համագործակցային ուսուցման արդյունավետությունն ապահովելու գործում, երբ աշակերտները կատարում են տարբեր առաջադրանքներ, տարբեր տեղերում, տարբեր զույգերի հետ:

Այս բոլորը հաստատում են, որ ուսուցիչը կարևոր դեր ունի համագործակցային ուսուցման կազմակերպման գործընթացում. ձևավորում է սովորողների խմբերը, պլանավորում առաջադրանքները, սահմանում առաջադրանքների կատարման պայմանները և ժամկետները, գնահատման ձևերն ու դրանց կիրառման ուղիները;Այլ խոսքով կազմակերպում է ուսուցումը:

Ուսուցչի դերը՝

1. Որոշումներ կայացնող՝ Որոշում է՝
    - Խմբերի մեծությունը
    - Խմբերի ձևավորման սկզբունքներ
    - Սենյակի դասավորությունը
    - Անհրաժեշտ նյութերն ու ռեսուրսները
    - Դերերը
2. Առաջադրանքներ մշակող և դրական փոխկախվածություն Ապահովող՝ Ապահովում է՝
    - Առաջադրանքի ներկայացումը
    - նպատակի հստակեցումը
    - դրական փոխկախվածության ձևավորումը
    - անհատական պատասխանատվության ձևավորումը
    - միջխմբային համագործակցության ձևավորումը
    - հաջողության չափանիշների պարզաբանումը
    - ցանկալի վարքի չափանիշների սահմանումը

3. Գնահատող՝ Գնահատում է՝
    - Աշակերտի ուսումնառության որակը և քանակը
    - Խմբի գործունեությունը

4. Վերահսկող և աջակցող
    - Աջակցում է առաջադրանքի կատարմանը
    - Վերահսկում է աշակերտների վարքագիծը
    - Ամփոփում է

Ուսուցումը սկզբնական փուլում ուսուցչի ուշադրությունը հիմնականում ուղղված է համագործակցային մեթոդների կիրառմանն ու կատարելագործմանը: Աշակերտները սկսում են հարմարվել մոտեցումներին և ըմբռնել նորարությունները: Առաջին հայացքից կարող է թվալ, որ դասավանդման բովանդակությունը մղվել էերկրորդ պլան, սակայն կարճ ժամանակ անց նկատվում է բովանդակության և ակադեմիական նպատակների իրականացման վերելք:

Կիրառման սկզբնական շրջանում ուսուցման համագործակցային մեթոդները կարող են արդյունավետ թվալ: Համբերատարությունն ու հաստատակամությունը կօգնեն հասնելու ուսուցման ակադեմիական բարձր արդյունքների: Ի վերջո, և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները կդառնան նոր մշակույթի կրողները:

Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառությունը մարտահրավերային է և հետաքրքիր: Դա նաև դժվար է և ժամանակատար: Նոր մոտեցումը կարող է մեծ ջանք պահանջել, սակայն արդյունքը կփոխհատուցի այն:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ։ Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝ Աշակերտների թիմային առաջիմադություն, Խճանկար, Շրջագայություն պատկերասրահում և Խմբային հետազոտություն։

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից։

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը համարվում է առավել հեշտ մեթոդներից մեկը և օգտակար է այն ուսուցիչների համար, որոնք նոր են սկսում կիրառել համագործակցային ուսուցման մեթոդները։ Այս մեթոդը խթանում է համագործակցությունը և մասնակցությունը։ Կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահադրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ։

Ընթացքը

Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանենք չորս- հինգ հոգանոց խմբերի։ Յուրաքանչյուր խմբում ընդգրկենք գերազանց, միջին, և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների։

Խմբերին տանք նոր թեմային առնչվող հանձնարարություն։ Հանձնարարությունը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացնում է նյութը։ Ապա ստուգում ենք նյութի յուրացման աստիճանը։ Յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը։ Առաջադրանքի գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով ներդնում է ունենում խմբի ընդհանուր ցուցանիշում։ Գնահատման հիմնական չափանիշն այն է, թե ինչպիսի փոփոխություն է արձանագրում աշակերտը իր նախորդ ցուցանիժի համեմատ։

Այս մեթոդում էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համա: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Խճանկար

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին:

Այս մեթոդն ունի հետևյալ փուլերը.

- Նյութի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքման փուլ- Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ թեմայի փորձագետ: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:
- Աշխատանք փորձագիտական խմբում- համեմատում և հարստացնում են նյութերը:
- Աշխատանք ուսումնական խմբում- յուրաքանչյուր մասնագետ իր խմբակիցներին սովորեցնում է իր ենթաթեման:
- Ավարտական աշխատանք- աշակերտները ստուգողական են հանձնում ամբողջ թեմայից:
- Ամփոփում- արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Շրջագայություն պատկերասրահում

Այս մեթոդի մպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու,

քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

Ընթացքը։ Ուսուցիչն ուսումնական նյութը բաժամում է չորսից վեց մասի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու։

Խմբերն աշխատում են տրված մասի վրա և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն։

Պատրաստի աշխատանքները փակցվում են պատին՝ ստեղծելով մատկերասրահ։

Խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, տվյալ անդամը ով կազմել է դա սկսում է մանրամասն ներկայացնել։

Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին։

Խմբային հետազոտության մեթոդ

Այս մեթոդի ընթացքում աշակերտները խմբով աշխատում են կոնկրետ խնդրի վրա։

Նպատակն է՝

- Սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը։
- Աշակերտները խորությամբ են յուրացնում ուսումնական նյութի բովանդակությունը։
- Աշակերտները սովորում են համագործակցել՝ խնդիր հետազոտելու ընթացքում։
- Այսպիսով՝ աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգացնում են հետազոտելու և համագործակցային աշխատանքի հմտություններ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցումը գործուն և արդյունավետ ուսումնառութլան հնարավորություն է ընձեռնում: Այս համագործակցության շնորհիվ աշակերտները

զարգացնում են իրենց ուսումնական հմտությունները և ընդլայնում ըմբռնումները՝ զանազան իրական հանգամանքներում մասնակից դառնալով իրենց հետաքրքրություններն ու երևակայությունը խթանող կոնկրետ գործնական աշխատանքների: Նրանք անհատապես և խմբերով կարծիքներ են քննարկում, կազմում հանձնարարականների ցանկեր, գրում հայտարարությունների տեքստեր,հավաքում հետազոտություններից ստացված տվյալներ, նախապատրաստում ելույթներ և այլն:

Համագործակցային ուսումնառության մեթոդները կարող են արդյունավետորեն գործադրվել ցանկացած դասարանում՝ ցանկացած բովանդակություն ուսուցանելու համար: Այս մեթոդները հաջողությամբ կիւառվում են ինչպես համասեռ՝ հավասար ընդունակություններ ունեցող աշակերտներից, այնպես էլ օժտված երեխաների կամ հատուկ կրթության դասարաններում: Համագործակցային մեթոդների կարիքն զգացվում է հատկապես առաջադիմության տարբեր մակարդակներ ունեցող դասարաններում:

Համագործակցային ուսուցումը կարող է նպաստել երեխաների կարողությունների ըստ ամենայնի բացահայտմանը: Հնարավորությունների տարբերություններն ավելի շուտ դառնում են միջոց, ռեսուրս, քան՝ հիմնախնդիր:

Համագործակցային ուսումնառության բոլոր մեթոդների համար էլ ընդհանուր է հետևյալ գաղափարը. աշակերտները համագործակցում են՝ միասին սովորելու նպատակով և պատասխանատու են ինչպես իչշրենց, այնպես էլ թիմակիցների ուսումնառության համար:

Համագործակցային հիմունքներով կառավարվող դասարաններում վարքն

օրինակելի է, քանզի նրանք շահագրգռված են սովորելու հարցում։ Ուստի և ակտիվորեն մասնակցում են ուսումնառությանը։

Դասարանավարության ամենաարդյունավետ եղանակը համագործակցային ուսումնառության նպատակով խմբերի համար դրական պարգևների համակարգի ստեղծումն է։ Ուսուցիչը դասարանում ուշադրություն է դարձնում որևէ խմբի՝ իր համար ցանկալի արդյունքին։ Մյուս խմբերն իսկույն ընդօրինակում են այս վարքը, որն արժանանում է ուսուցչի դրական ուշադրությանը։

Արդյունավետ համագործակցային ուսումնառության համակարգի էական բաղադրիչներից են հստակ ակնկալիքները։ Անհրաժեշտ վարքը ներառում է ուշադրությունն արագ և լուռ կենտրոնացնելու կարողությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. David W. Jonson and Roger T. Jonson. “ An Overview of cooperative learning”,
2. David W. Jonson, Roger T. Jonson and Edythe Jonson Holubec. “ The new circles of learning”, “ Cooperation in classroom and school”,
3. D. Jonson, R.Jonson and Ed. Holubec, “ The nuts and bolts of cooperative learning”
4. Pasi Sahlberg, “ Elements of cooperative learning”
5. Ա. Արնաուդյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խրիմյան «Մասնագիտական զարգացման ձեռնարկ»
6. Ս. Վարդումյան, Լ. Հարությունյան « Մասնագիտական զարգացման ձեռնարկ»,
7. Ջինի Լ. Սթիլ «Համագործակցային ուսումնառություն»
8. .Dewey J. “ Experience and education”
9. Vesa Purokuru “ Cooperative learning trainers guide”
10. .Sholmo Sharan “ Handbook of cooperative learning”
11. .Slavin ‘’Cooperative learning: theory, research,practice’’
12. .Pasi Sahlberg “ Group investigation”